ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2025

ՏԵՔՍՏԻԼ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ո՞ր չափումների հիման վրա է որոշվում մանկական հագուստի չափը:**

1) մեջքի երկարություն, վզի շրջագիծ
2) կոնքի շրջագիծ, արտադրանքի երկարություն
3) հասակ, կրծքի շրջագիծ
4) թևքի երկարություն, գոտկատեղի շրջագիծ

2 **Նշվածներից ո՞րն է օձիքի տեսակ՝ ըստ ձևվածքի դասակարգման:**

1) ուղղանկյունաձևը
2) կոնաձևը
3) շալաձևը
4) ալիքաձևը

3 **Ե՞րբ և որտե՞ղ է առաջացել նորաձևություն հասկացությունը:**

1) 20-րդ դարում Անգլիայում
2) 16-րդ դարում Իտալիայում
3) 4 -րդ դարում Բյուզանդիայում
4) 12 -րդ դարում Ֆրանսիայում

4 **Ո՞ր կարատեսակով են իրար միացվում վերևի և ներքևի օձիքները:**

1) փականք կարով
2) շրջակարով
3) զարդակարով
4) վրադիր կարով

5 **Ի՞նչ ջերմախոնավային մշակում է անցնում գործվածքը՝ ձևելուց առաջ:**

1) դեկատիրովկա
2) նստեցում
3) լայնացում
4) հարթեցում

6 **Ո՞ր նյութը *չի* օգտագործվում դասական բաճկոնի լանջափեշատակի (подборт) միջնադիր շերտի համար:**

1) Սինտեպոն
2) Քաթան (холст)
3) Ֆլիզելին
4) Սոսնձային

7 **Ընտրեք պատկերների և տրված կարատեսակների ճիշտ համապատասխանեցված տարբերակը:**



1. ռելիեֆային վրակարված
2. դարսեր (պարզ միացնող)
3. շրջակար պարզ շրջանակով
4. կանթով միացման կար
5. ծալով կար աստառի հետ միացված

1) Ա4, Բ5, Գ1
2) Ա5, Բ2, Գ3
3) Ա3, Բ1, Գ2
4) Ա1, Բ4, Գ5

8 **Տրված մանրաթելերից ո՞րն է համարվում սինթետիկ:**

1) ացետատը
2) վուշը
3) պոլիեսթերը
4) վիսկոզը

9 **Ո՞ր համարի ասեղներ են օգտագործվում նուրբ գործվածքների համար:**

1) 100-120
2) 90-100
3) 60-75
4) 120-140

10 **Ինչպիսի՞ն են լինում մեքենաները՝ կախված թելի հյուսման եղանակից:**

1) երկու ասեղանի
2) մաքոքային և շղթայական
3) ավտոմատ և կիսաավտոմատ
4) մեկ և երկու գլխիկանի

11 **Ի՞նչ է օվերլոքը:**

1) գործվածքի եզրերը մաքրակարելու մեքենա
2) դեկորատիվ կարեր կարելու մեքենա
3) ասեղնագործության մեքենա
4) կոճակներ կարելու մեքենա

12 **Ո՞ր չափումներն են անհրաժեշտ կանգունակ օձիք ստանալու համար:**

1) օձիքի լայնություն, առաջամասի փորվածք
2) վզի շրջագիծ, օձիքի երկարություն
3) հետևամասի վզի երկարություն, օձիքի բարձրություն
4) վզատեղի փորվածքի երկարություն, օձիքի բարձրություն

13 **Ո՞րն է կարի մեքենայի մաքոքի (шпулька) հիմնական ֆունկցիան:**

1) կտորի տեղաշարժի ապահովումը
2) վերին թելի մատակարարումը
3) կարի արագության կարգավորումը
4) ներքևի թելի մատակարարումը

14 **Նշվածներից որ՞ն է նպաստում հագուստի որակի բարելավման գործընթացին:**

1) էժան նյութերի օգտագործում
2) որակի վերահսկողություն յուրաքանչյուր փուլում
3) կարի արագության բարձրացում
4) կարի նախապատրաստման ժամանակի ավելացում

15 **Ի՞նչ է ISO-ն**

1) տեխնոլոգիական գործընթացի փաստաթուղթ
2) ընկերության ֆինանսական հաշվետվություն
3) կարի մեքենայի անվանում
4) որակի կառավարման միջազգային ստանդարտ

16 **Ո՞ր կարով *չենք* կարող միացնել հագուստի ուսային և կողային կտրվածքները:**

1) փականք կարով
2) ներկարով
3) վրադիր կարով
4) շրջակարով

17 **Որո՞նք են տրիկոտաժե գործվածքների առավելությունները:**

1) ջրակայունություն
2) բարձր խտություն և կոշտություն
3) չձգվելու հատկություն
4) առաձգականություն (эластичность)

18 **Ի՞նչ է հագուստի հիմքի գծագիրը:**

1) ձևաթուղթ՝ գործվածքը ձևելու համար
2) գծագրի տարբերակ՝ առանց ավելացումների և լրացուցիչ մանրամասների
3) գծագիր, որը ծառայում է որպես հիմք տարբեր ոճերի մոդելավորման համար
4) ընտրված մոդելի ձևված տարբերակը

19 **Ո՞րն է կարի արտադրության պլանավորման հիմնական փուլը:**

1) մարքեթինգային հետազոտությունների անցկացում
2) նյութերի գնում
3) տեխնոլոգիական գործընթացի մշակում
4) արտադրանքի տեսականու և արտադրության ծավալի որոշում

20 **Հագուստի պատրաստման ո՞ր փուլում *չի* կիրառվում ջերմախոնավային մշակումը:**

1) վերջնական հարդարման փուլում
2) գործվածքը կտրելուց առաջ
3) հագուստի կտրվածքների միացման փուլում
4) սոսնձային միջնադիրների ամրացման փուլում

21 **Տրված մանրաթելերից 3-ն ունեն օրգանական ծագում: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Ասբեստը
2. Վիսկոզան
3. Բուրդը
4. Նեյլոնը
5. Մետաքսը
6. Պոլիեստերը
7. Լավսանը
8. Դուբլերին
9. Լատեկսը

22 **Տրվածներից 3-ը հագուստի հարդարող մանր մասնիկներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Սեղմոնը
2. Երեսացուն
3. Ռելիեֆը
4. Կոկետկան
5. Գլխանոցը
6. Գրպանը
7. Բազկակալը
8. Թևը
9. Ուսադիրը

23 **Տրված պնդումներից 3-ը սխալ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Գործվածքի կառուցվածքը հենքաթելի և միջնաթելի փոխադարձ դասավորությունն է:
2. Կարերի մեջ գտնվող գրպանի մշակման համար օգտագործվում է գունաշերտ:
3. Տոգան՝ հին Հռոմում տղամարդու թիկնոց է:
4. Տեխնիկական մոդելավորումը գծագրի հիմքի փոփոխություն է:
5. Կամրջակը կարվում է միայն սոսնձային գործվածքից:
6. «Տեխնոլոգիական հաջորդականություն» հասկացության էությունը հագուստի պատրաստման գործողությունների ճշգրիտ հերթականությունն է:
7. Մանրաթելերը լինում են բնական, քիմիական և ֆիզիկական:
8. Նորաձևությունը խթանում է թեթև արդյունաբերության զարգացմանը:
9. Ստանդարտացումը չի նպաստում արտադրանքի անվտանգությանը:

24 **Տրվածներից 3-ը տեխնիկական մոդելավորման եղանակներն են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Հիմքի փոփոխություն
2. Տեխնիկական էսկիզավորում
3. Գոտկատեղի գծի տեղափոխում
4. Սեղմոնների տեղափոխում
5. Հիմքի լայնացում
6. Սեղմոնների երկարեցում
7. Կոմբինացված ձևափոխում
8. Ռելիեֆների երկարացում
9. Գեղարվեստական էսկիզավուրում

25 **Տրվածներից 3-ը նշվում են ձևաթղթերի (լեկալների) վրա: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Արտադրանքի քանակը
2. Արտադրանքի անվանումը
3. Գործվածքի երկարությունը
4. Սեղմոնների հաշվարկը
5. Հենքաթելի ուղղությունը
6. Գործվածքի թափոնների չափը
7. Հագուստի ոճը
8. Գծագրի լայնքը
9. Դետալների քանակը

26 **Տրվածներից 3-ը դասվում են ոչ հյուսված տեքստիլ նյութերի շարքին: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Արհեստական կաշի
2. Փարչա
3. Քեչա
4. Ռիբանա
5. Ժակկադ
6. Սինտեպոն
7. Տավիշ
8. Շիֆոն
9. Պիկե

27 **Տրվածներից 3-ը մտնում են մեքենակարերի դասակարգման աղյուսակի մեջ: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Եզրային կարեր
2. Հանդիպակաց կարեր
3. Կցակարեր
4. Հարդարման կարեր
5. Կոկետկայի կարեր
6. Բլանդակարեր
7. Շուլալակարեր
8. Ծալքերի կարեր
9. Միացման կարեր

28 **Տրվածներից 3-ը հագուստի հիմնական ոճերն են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Բոհո
2. Ռոմանտիկը
3. Պրեպպին
4. Դասականը
5. Հիպպին
6. Մինիմալիզմը
7. Լամբերը
8. Սպորտայինը
9. Նյու լուքը

29 **Տրված 3 ցուցանիշներով գնահատվում է արտադրանքի անվտանգությունը: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Կենսաբանական
2. Սոցիալական
3. Նյութական
4. Մեխանիկական
5. Քիմիական
6. Արտադրական
7. Ֆիզիկական
8. Բժշկական
9. Գիգրոսկոպիկ

30 **Տրվածներից 3-ը չափագիտության բաղադրիչներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Մեխանիկական
2. Նյութական
3. Սոցիալական
4. Արտադրական
5. Հիմնարար (տեսական)
6. Օրենսդրական
7. Շուկայական
8. Գործնական (կիրառական)
9. Տնտեսական